

ՅԵՆԵԼՈՒՆԺ ԵՐԵՐԱՅԻ 1897 Թ. ՕԳՈՍՏՈՍ

ՆԵՐՔՈՂԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՒՄԱՅ,

ԱՍԱՅԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԷՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՑԻՈՅ.

(Նառնակուրիւն) *

Ձեռն սիրեաց երանելին Մեսրոպ [Թղ. 11^թ] և ինոյն բնակեաց՝ և վասն այնորիկ զանցաւորս արհամարհեաց, առնելով և ուսուցանելով՝ զի մեծ կոչեցի ի սեփհակն ժառանգութիւնն, ուր են հաւքն և նախնիք նորա, զի որոց զինի հետեւաց՝ նոցա է ստուգապէս զորմ և զաւակ: Մասնահարցն, նահապետացն, և հայրապետացն, քահանայիցն, դատաւորացն, աւգոստիցն, տեսանողացն, աւետարանչացն, առաքելոցն, հովուացն, և վարդապետացն և համայն հոգեւոր լրման ի միասին հաւաքելոց ընդ ամենեւեան և այժմու գովեցեալս: Ընդ ոմանս նախնաձեցաւ՝ և յոմանց խուռն ինչ վերջացաւ, եթէ ոչ յանդգնութիւն է ասել և գերազանցեաց ևս. ոմանց բանին, կիսոց զործոյն, այլոց հեղութեանն, ոմանց նախնաձուռն, յոլովից վտանգիցն, ոմանց առաւել՝ և կիսոց համայնի նմանեաց. և այլ յայլմէ զգեղեցկութիւնն ընկալաւ՝ որպէս որք զանգրիանդս գերազանցութեամբ գրեն: Մի առաքինութեան տեսակ յամենեցուն հաւաստացոյց. զբժնելիցն բանիւ՝ գերազանցեաց զործով, և զործանելիցն՝ բանիւ յաղթեաց. քան զորս գերկոսեանն ունէին՝ միովն յոլովեաց, և քան զորս ի միումն ծայրագոյնք՝ բաղմաւքն զանց արար: Եւ եթէ մեծութիւն է նախաժամանկոցն աւրինակ լինել առաքինութեան ապաղայիցն, ոչինչ նը-

ւաղ ի գովութեան մերում բարեոյս հետեւելոցն զինի նորա գոլ գեղադէշ զաղափարս Արդ՝ զամենայն ասել զնորա և համեմատել՝ ոչ որ ի ծայրագոյնիցն գերազանցէ զսա, և պատմութիւն և ոչ գովութեան ոճ. և կամ զկենցաղն յիշել թէ յորոց արհեստից և վայելից եկն յայս՝ որ է զարմացումն և ի վեր քան զհրաշ:

Քանզի ոչ ի տան կեցեալ և ոչ յանապատի սնեալ՝ առ միանձուռն ընտանեւս և չորաձաշակս, աղաւթակերս և պարկեշտախաւսս, այլ ի քաղաքս, յարկս թագաւորաց և ի դրութեան հզաւրաց. ¹ անտ ուր յոլով են հաղորդն և քաղցրագոյն խանձն, ակամա և զիւրաւ ըմբռնումն, և անթիւ է նիւթ հրոյս. այսինքն՝ պատրիշ սգայութեանցն, տեսանելեացն ցանկալին, լսելեացն հեշտալին, ճաշակելեացն համադամն, ըռնկացն հոտոտումն, շաւափեւեացն կակղադոյնն, և ամենայն ինչ պատրաստ առ ի չարութիւն և մուտք ի մեղս: Ուր և ողջախոհութիւնն է եղկելի և բղձախոհութիւնն գովելի, պարկեշտութիւնն ծիծաղելի, ըռիշտ և կարկամ կարդալի և շրջալսելի, և ոչ պատուելի՝ ճոխ և աղատ և առատ համբաւելի: Եայնպիսի վայրի գոլով երանելիս, և յայնմ խորագոյն տղմոյն՝ ոչ ի վայր հակել՝ և ոչ աղտեղանայր գեղեցիկ պատմածան ոգւոյ նորա. և ոչ պղտորելին անըմբռնելի միտք նորա: Քանզի յիշէր զնախնիսն՝ և պահէր զաղաւթութիւնն, որպէս պատանին գեղեցիկ ի տան ներքինոյն:

Եւ զինչ զործառնութիւն նորա՝ զիւանունն արքունի, մանաւանդ եթէ (Թղ. 12^ա) գլխաւորութիւն զիւանին. զի նա միայն էր հրմուտ լատինական մատենին և արիական տառին և փիւնիկեցւոց թլուականին ² Եւ որպէս առնէր, ազահէր, գողանայր, նենկէր, կաշառ ընդունէր, պատրէր ի կարմրութիւն ոսկւոյն, կամ ի պայծառութիւն արծաթեոյն, կամ ի բազմագունակ ականջն և կերպասու-

* Տես. Արարատ Թ. Է. եր. 330.

ա. 2 եռ. հաւքն.

բ. 2 եռ. նախապետաց.

1. Աոր. ձեկեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական զիւանին

2. Փիւնիկեցւոց թլուականի և լատինական մատենի մասին միայն սա է գրում.

ցըն՝ մի լիցի՝¹ այլ կայր անարատ և անխար-
գախ բարեխաւս և աւղնական որրոց և այրեաց,
զրկելոց և զըրացելոց, յամաւթ առնելով զայ-
նոսիկ որ յաղայութենէ և ի թուլութենէ
մեղկին՝ և փաստաբանն զարհեստն և զտե-
ղին: Եւս և անմթեր կարով ի մէջ ոսկէհոս
զետոյն՝ և հեշտահոս առնելոյն, անխոնաւ
սղահելով զթմբուկ կուսութեանն: Վասն որո
յորժամ ի բաց լինէր ի գործոյն՝ ոչ կարաւ
տանայր Զաքէի խոտամանն, այլ համանման
երգոյն՝^ա կենաց՝ լքանէր զամենայն և ընթա-
նայր զհետ կենարարին,¹ անկրկնելի կապեալ
զմաճն՝ և թոյլ տըւեալ սպիասելոյն՝ հակա-
ռակեալ ընդ կուսակրանն: որք թէպէտ և
սղահեցին զերկուս մարդս անապական, սակայն
յանապատի կելով՝ յայրս և ի փափարս, խո-
տարուտ խովացեալք և մեղրաճարակք՝ և
բացեա զոլով ի մարտէն: Իսկ սա յասպարի-
սի նահատակէր, և մենամարտեալ յաղթէր,
ի մէջ ախտադուժար խաղմին՝ ոչ նեղէր՝ և ոչ
տապանայր՝ և ոչ աղաղակէր, խաբեցեր զիս,
Տէր, և խաբեցա՝ այլ ծանր և դառն՝ թե-
թե և քաղցր թըւէր վասն յուսոյն և աղ-
գակցութեանն Տեառն: Զնայր բոլորովին անա-
րատ և անապական:

Տես և զայս՝ թէ որպէս հաւատարեցաւ,
որպէս Մատթէ՝ և իմ աւետարանիչս, նախ
մաքսաւոր՝ և ապա քարոզ կենաց: Այլ և
յաղագս կորովութեան իւրոյ՝ կարգէր ի զի-
նուորութիւն զարաւարին Յունաց, և անդ
բարիք երեւէր: Աշակերտէր Կարապետին,
ոչ զրկէր՝ և ոչ խըւէր, այլ ասկեալք թոշա-
կան շատանայր, և ընդ ամենայն հասակս և
արհեստս անարատութեամբ անցանէր՝ որպէս
Տէրն իմ և Աստուածն Յիսուս: Եւ յորժամ
զփորձ էառ ամենայնի որ ինչ հեշտալի է կեն-
ցաղոյս և ըղձալի բազմաց, որպէս Եկէսեսա-

ա. Լուս. «Մատթէոս»:

բ. 24այ Ն. Է. Բ.:

1. Այս հատուածը նշանաւոր է հեղինակի
ժամանակակից բարք ու վարքի նկատմամբ, որից
սրբազ երևում է, որ նորա օրով էլ արքունիքնե-
րում և էն ծառայողները աղատ չեն եղել ներկայիս
արատներից:

2. Կոր. «Եւ առեալ զիսն պարծանաց, և-
լանէր զինի ամենակեցոյց խաշելոյն»:

տէսն ի նախնումն, և ծանեաւ թէ ունայն և
սնոտի է զոր ջանան մարդիկ ստանալ ի ներ-
քո արեղական, և յիշեաց զբանն Տեառն.
զժուարաւ մտանել փարթամաց ի սեփական
ժառանգութիւնն աղքատաց՝ վասն զի ոչ մեր-
կանան յընչիցն. և որ ոչ հրաժարէ յամենայն
ընչից իւրոց ոչ է սլաշտաւենա նորա: Սա-
կըս որո լքեալ զամենայնն՝ և կրղիղանս հա-
մարեալ՝ և պատճառ գլորման և մահու,
զոսկի և զարծաթ՝ զակունս և զմարգարիտս,
զբեհեզն և զկերպանս, զերիւարս պահրա-
ցիս՝^ա և զջորիս երկիւմաղիս, ըզգէնան և
զկազմածան որք զբաւսանք են կենցաղոյս,
Եւս և զփառս թագաւորաց և զպատիւս իշ-
խանաց և զզովութիւնս յըռամկաց, զծաղիւ-
հոտ զինխնն և զարուեստաւոր մատուակ-
սըն, զքաղցրաճայն տաւիղս՝ և զուշատար ջը-
նարս, և զգողորիկ կերակուրս, և որ ինչ
մասունք հետեին սոցա՝ բ զոր յիմարեալքն
յատիւս ըղձանան ստանալ՝ և երանի տան
ունաւդացն: [Թղ. 12բ.]

Սա՝ ի վայրկեան ժամանակի մերկանայր՝
զամենայն խոտան և զարշելի վարկանելով, և
խաբաղնապեա՝ և հետիոտս փախուցեալ
անսարկ և անսաշար՝ իբրեւ զեղջերուս և
զթըռչունս զիմէր ի բարձունս, և խոտաճա-
րակ եղեալ՝ ոչ ցաւէր զվաղիւն, լսելով ընտիր
անաթոյն՝ թէ սիրողն աշխարհի թշնամի է
Աստուծոյ: Եւ ի լքանելն՝ որպէս առնէր, ոչ
պաճարարաւ թողոյր զանդաստանն, և ոչ
սոկրատաւրէն ցրուէր զստացուածն, այլ ըստ
զերազուենին հրամանի՝ թէպէտ և ի մանկու-
թենէ պահող էր աւրինացն երկուց՝ սակայն
զկատարումն հայցէր: Ուսանէր և զպատճա-
ռըս կենացն վասն որո վաճառէր և տայր, առ-
նոյր և հետեւէր աննրկբա և անդառնալի:

Եւ արդ՝ զինչ հատուցումն այսմ՝ զի
եթէ Կեփայեանքն ընդ պատառատուն վարմին
ընկալան արքայական աթոռ, քննել զորդիան
Խարայելի իսկ որ զայս ամենայն ելիք ի միում
վայրկենի՝ որչափ առնուցու: Եթէ անտ՝ ոչ
է ակնառութիւն, և ըստ չափոյն է չափն, և
այդեգործացն հաւասար է ակն գնախաժամուն

ա. 24այ Ն. Է. Բ.:

բ. 2եռ. սոցայ:

գ. Լուս. «չափն»:

և մետասանին, ապա^ա ի բաղմել բանին մարդացելոյ ի բարձն փառաց՝ և սրբազան ծանաթքն ընդ նմա՝ ի նստուցանէ և զսիրելիս իւր յաթոռ փառաց ընդ աջմէ նորա ընդ Պաւղոսի աշխարհալոյս վարդապետին զանըւանակիրն իւր՝ քննել զնորս իսրայել. և արոհել զայծիան և արտաքս հանել՝ և առնուլ զպարգև և զպսակս ի ձեռանէ Տեառն և բաշխել բեղնաւորացն և մուծանել յառազաստն:

Զի թէ զշնոյն և Նինըւէացիքն դատեն՝ որչափ ևս սա. և զի ոչ երկոտասան միայն աթոռ. քանզի և ոչ բազ՝ ուստերք Յակոբայ յերկրէ, այլ յոլով ազգք ըստ լեզուացն և ըստ թըւոյ հրեշտակացն. այսպէս յոլով աթոռք ըստ համարւոյ համարէն սեռից ազանց: Եւ յորժամ ժամանէր յանապատն, ոչ զղջանայր և ոչ թախծէր, կամ կեղծաւորեալ խանկարէր զդէմս, այլ լըւանայր զերեսս սրտին և խըղձէ կարծեաց մշտատեսակ^դ աշխարհական հոգոյ՝ հանել զքարեղէնն և դնել զմեղէնն: Խնոյր զաղբիւրն, որո հոսումն աղանդացուցանէ զմարդն, և բանայր զներհակս. նորա: Այլ և զսափոր յուսոյն զվերստին աւազանն՝ ջերմեռանդ բխէր. աւծանէր զզլուխն ներքին մարդոյն թափեցելոյն իւղով և աստձով^դ առնանկաց. և սիրզրն առնէր պահոց ամենայն զգայարանացն, փակելով զպատուհանն՝ զմուտըս մահուն, և զմիտան պահել ի վեր յեռեալ յարիին՝ և ոչ իջանել ի նիւթականս: Սանձէր զլեզուն և աղխէր զըրթունսն, ոչ շարժիլ և ոչ բանիլ^ե ի բանս ունայնս, այլ պարապել միշտ աստուածաշունչ մատենից. յարմարէր զերանն քնար՝ և զատամունսն լար, զըրթունսն մատունք, և զլեզուն կնտընդոց. և զհոգին խառնեալ ընդ Աստուծոյ հոգւոյն, և լեալ երաժիշտ՝ երգէր քաղցրաձայն զերգս հոգեւորս ի փառս սուրբ երրորդութեանն:

Կրթէր անսըւաղութեամբ զանձն իւր՝ յոտնաւորութեամբ զցայկ և զցերեկ. ոչ նիրհէր և ոչ ննջէր և ոչ ընկողմանէր ի մահիւծրս, [թղ. 13^ա] այլ յաւրէնս Տեառն խորհէր: Ժառ բուսեալ Աստուծոյ ի գնացս ջրոց^դ յա-

ւերժատերեւ և պրտդատու, յորդորէր զանապատաւորսն ի նոյն վաստակ և ի ջանս՝ բանիւ և գործով:

Ո՛վ հոգեւոր ճըպռանն, անխափան երգողին զյաւդաւորն և զոլորակն^ա որ զարդարէր զանապատն ամս յոլովս և ինքն յինքեան ուրախ լինէր երանելին, զովէր զխուղն՝ և զըգուէր զամայութիւնն ասելով: Ո՛վ թաքուն դանձ՝ և անպարապ պարզեւ, խաղաղութեան մայր՝ և ողջախոհութեան առիթ, երկնաին քաղաք՝ և անմատչելի զղեակ, անխըռով վայր՝ և անքոյթ նաւահանգիստ, զըրունք պատուհանիցս՝ և արմատահատ ախտիցս, բարձրագոյն տեղի՝ աստուածոց բնակութիւն՝ և հրեշտակաց մերձաւորութիւն: Ոչ գոյ ի քեզ աներկիւղ երկիւղ՝ և ոչ ծառայութիւն, կարծեմ թէ դու ես արքայութիւնն, վասնզի ի քեզ տեսաւ անտեսանելին և երեւեցաւ աներեւելին, ծնաւ անշունչն զնշաւորն՝ և անարիւնն զարիւնաւորն, անըգայն զսգայունն՝ և անշարժն զշարժունն: Ի քեզ վառեալ չընչին^դ բանական բոցովն, կոչէր զհալածեալն և հալածողին^դ առաքէր Աստուած, ի քեզ բարձունքն խոնարհեալ ջամբեցուցանէր զծովածին ծնունդան, և դառինքն քաղցրացեալ՝ զիացուցանէր զգեռարոյս մանկունսն, ի քեզ կրկին քառասուն ջրածինն և աստուածաբանակ լինէր և ուսեալ բերէր աստուածագիծ մատեան՝ տասնբանեան կանոն: Ուր և հաց անձրեանայր, վեմ աղբիւրանայր, լորամարդ խորոված թըռուցեալ ի վրանսն մրտանէր, ի քեզ մեղացեալ Թեղբացին^դ քաղցր սքով տեսանէր զանորակն, և զծանաւթ նորին՝ առաքէր բանիւ զԱսորին՝ նախաքարոզ աւազանին, և ալերբ հալածէր զմահացուն՝ յաւրինակ հացին կենաց. և սգալի աչաւք տեսանէր զանմարմինսն կառաւք և երիւարաւք բանակեալ: Ի քեզ մարգարէութիւն Յայէլ զՍիսարա զփախուցեալ հսկայն զգետնեալ ջրից ընդ ծամելիս վարէր՝ համաքատակ րդ-

ա. 2եռ. «ապա»: զ. 2կայ ն. Լ. Բ.:
բ. 2եռ. «նմայ»: և. Փոխ. «բանալ»:
գ. 2եռ. «մշտատեսակ»: զ. «զըրոց» ձեռագրինէ:

ա. Լուս. «ձայնն»:
բ. Լուս. «Լեառն Սինայ և Մոլսէս»:
գ. Լուս. «մորենին»:
դ. Լուս. «Փարաւոն»:
և. Լուս. «Մովսէս»:
զ. Լուս. «Նիլոս»:

ւոյ կուսին: Եւ ամբողջին երեսնամեա մեղրա-
ճաշակ լինել: Եւ աստուածպետականն Յիսուս՝
յետ վկայո թեանն Հաւր և առնոյ Հոգւոյն՝
ի քեզ դիմա՝ և մենակուեալ՝ ընկձէր զահա-
զին վիշապէ: Այլ և անթիւ հոյլք քաջա-
գաւտեացն և փայլէին յեղիպտոս: քե և չիփ-
սիմեանքն հեղիացան՝ և Բախսեանք ոսկիա-
ցան: Բաւշեանք և Անդոնեանք պայծառա-
ցան: և Տրդատէս տրքայն զելս ճանապարհին
ի քեզ առնէր: Եւ մերն Հուսաւորիչ՝ յետ զա-
նազան քրտանցն և նահատակութեանցն, ա-
ռաքինութեանցն և ճգնութեանցն, ծածկա-
բար խոյս տրուեալ թաքէր ի քեզ: պարտ-
պետալ և ճանաչէր զՏէր: և վախճանէր ի
Սեպուհ լերինն՝ և Արուսեակն ընդ քարիւ-
ծածկէր: վկաելով առանցքոյ՝ անկատար
զամենայն առաքինութիւնն: վասն որոյ զայլ
բարիսն քե պատէր:

Եւ զոր ասեմ.՝ քանզի անհամար են հը-
րեշտակեալքն քե: Վասն որոյ տոփացի զո-
փացի և առ քեզ դիմեցի: և սիրեմ զքեզ
որպէս զվերինն Նրուսադէմ: Եւ մինչդեռ այս-
պէս [Թգ. 13բ] ջերմ էր ի սէր անապատին
և ուրախացեալ ջընծայր զաներկեան ջընծու-
թիւնն: ազգումն աստուածային ազգէր ի
նմա, և բանն նորա զայր ի վերա նորա որպէս
յորդոյն Զաքարիայ: և մովսիսարար խորհէր
շրջիլ զեղբարք իւրովք: զի տեսանէր զնոսա
յետ լուսոյն ի խաւար: և յետ բանին յան-
բանութիւն: հակիրճ և նախատինս ազգաց
բազմաց: և զայրանալ հոգին որ ի նմա՝ և
նախանձէր զբարիք նախանձն: Եւ թէպէտ
հարեալ էր ի սէր անապատին՝ սակայն իրրե
զճարտնացին որ ըզձայր նըղովիլ ի Տեառնէ
վասն երգբարց իւրոց: և վտանդէր ի ձգմանէ
երկոցունցն ի փափաքանաց և ի հոգւոյն: Մինն
պատուէր զվերինս և զամայութիւնս և զհան-
դարտութիւնս: ներքին և արտաքին մարդոյն
և զմտացն յինքեան երթալ գնալ և անմեաս
անդրէն զառնալ առանց ազտոյ խաւսել ընդ
Աստուծոյ: և ճառազայթ հոգոյն մաքրապէս
փայլել: ոչ խառնել ընդ ստորինս և ընդ պըղ-
տորս: և ոչ յաստուածային լուսոյն ի բաց

անդեալք՝ մինչև հասցուք զաղբիւրն և կա-
սեցուք ի տեղեանայն՝ լուծեալք ի հայելոյս
ճշմարտութեամբն: Եւ միւսն՝ ի մէջ գալ՝ և
աւքտել զայլս: և ընծայիլ Աստուծոյ ժողո-
վուրդ սեփհական՝ և յոլովս զպատկերն մաք-
րել: Վասն զի լաւագոյն է առաւելն, որպէս
քան զառնն՝ զբախտ: և քան զմի աստղ՝ եր-
կին բովանդակ: նոյնպէս քան զմի ոք ուղղել՝
զրոյր եկեղեցին: Վասն զի և Աստուած ո-
րում կալ մնայն էր իշխանութիւն յիւրում
փառսն: բայց թափեաց զինքն մինչև ի ծա-
ռախ կերպ և ամենայն նախատանաց համբեր
վասն բազմաց:

Այս հոգւոյն աթութն: յորմէ յաղթեալ
և ակամա ձգեալ: ելանէր յայրէն և վարէր
յեկեղեցի: ոչ ապարասանեալ ընդվզէր և ոչ
ամբարհատաձեալ յուսայր յանձին զաւրու-
թիւն: Այլ հեղարար և դիւրապէս զիմէր առ
հովիւն քաջ քաջաձաղ՝ առ հայրապետն Հա-
յաստանեայց: և հանդիպէր նմա ի գաշան
ճարունոյ: ի քաղաքագեղն Աշտիշատ: և
ողջունեալ՝ առնոյր զաջն և զողջոյնն: Եւ տե-
սեալ ծաղուն՝ ա ծիծաղէր: և բերկրեալ ջըն-
ծայր սուրբն ի սէր սրբոյն և ծանէր հոգւովն
ի հոգոյն գոյ զգալուստ նորա: Եւ զըւարձացեալ
ի աես միմեանց՝ հոգային զհոգս եկեղեցւոյ՝
որ էր հանապաղ զործ նոցա: Եւ ապա յի-
շեցուցանէր վեհն վեհազունին զպակասու-
թիւն եկեղեցւոյ իւր: Զոր լըեալ և յոգւոց
հանեալ՝ թէ ո՞վ տայր ինձ տեսանել զորոյմ
տառ: և ըստ մերում բառիս: զի հաւասար վա-
յելէին ի սեղանո աստուածախառս մատենից
գնեալքս արեամբ Տեառն: և մանաւանդ ի
մերում հիպատիս:

Արժան է և ոչ զանց առնել զիրագոր-
ծութենէ հրաժարման անապատին՝ թէ որ-
քան տրտմէին տարատրոհեալ միանձունքն՝

ա. Լուս. «Սահակայ»:

1. Կոր. «Յարուցեալ այնուհետև հասանէր
առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծաց: որոյ անունն
ճանաչէր Սահակ . . . » բայց և ոչ մի ակնարկ չկայ
կաթուղիկոսի գտնուած տեղի մասին: ներքողողը
կամ Տարոնը աւելի բարձրացնելու համար է յիշել
այդ մանրամասնութիւնը: կամ հաւանականօրէն
ուրիշ աղբիւր է ունեցել:

ա. 2եռ. անհասկանալի է: գուցէ անջատ պի-
տի գրուին:

զի գրկեցան ի խրատէ և ի տեսո նորա. ոչ միայն ասուեքն՝ այլ և անասուեքն, պաճարեղէնքն և շաղկակերքն, աւղախնքն և ջրայինքն, բոյսքն և անբոյսքն: Բանդի երկնէր երկիրն՝ և հեծէր ամային, բրբէլին քարինքն՝ և լային լերինքն, տրբորմէին տունկէքն՝ և բեկտէին բոյսքն, հառաչէին հաւքն՝ ա և թախծէին թըռչունքն: Գոռային զաղանքն՝ և գորովէին զիշախանձքն, պապաչէին պոռոչէին պաճարքն՝ և արտասուէին [[թգ. 14 ա] անասուեքն, բշէին բրբէլին, մընչախն, մըռնչէին, և յողոց հանէին ի բաժանման սրբոյն. քանզի զարմանող էր նոցա և նոքա հնազանդ և ձեռասուռ նմա՝ որպէս նախաստեղծին նախ քան զյանցանսն մինչդեռ անսխալ և անշարժ էր պատկերն, և ամենայն ինչ հնազանդ ի ներքոյ ոտից նորա:

Զինչ և զինաւորացն զատիլ ի նմանէ, և զաւրավարին պակասումն ի զաւրաց նորա, և զըշաւորացն զերիլ ի նմանէ, և որքան տըխրութիւն լինէր թագաւորին ի դընալն նորա. քանզի բազում պակասութիւն լինէր և կորուստ արքայական հարկին՝ յաղագս ոչ գիտելոյ զգիրս և զհամարս նոցա:

Եւ արդ՝ եթէ մեկնիլն ի նմանէ այնքան տրամութիւն էր անշնչոց և շնչաւորաց՝ թագաւորաց և զաւրավարաց՝ որչափ ևս առաւել ուրախութիւն զիւստ նորա՝ որպէս մեռելոց ի կենդանիս: Սակս որո զըշաւորացեալ հաւտապետին ի յայտնութիւն նորա, և փութանակի ազդ առնէ արքային զերեւումն և զխորհուրդ սրբոյն: Զոր լըւեալ և լցեալ խընտուութեամբ՝ առաքէ յԱսորիս՝ կոչել զայն որ ուխտեալ էր նմա: Որոյ անյայտող առեալ ընդ իւր զիմաստունն Դանիէլ՝ և ժամանէ առ կոչողն իւր՝ թարգմանելով զվարդուց արարեալ նշանսն զկրկին տասն և զերկու տասն:՝ որք ոչ բաւական[ան]յային բայից մերոց, որ ընդ խնդութիւնդ՝ ժամանէր և տրամութիւն:

Եւ ապա հրամանաւ հայրապետին առ-

նոյր երանելին Մեսրոբ զնշանադիրսն և իջանէր Յամիթ, և տայր ի թարգմանողն զի յարմարեցն ըստ վանկին. զորս առեալ և ոչ կարացեալ յաղաւորել, ամալթալից մնաին: Իսկ նորա ընկալեալ՝ իջանէր յԵդեսսայ առ Պղատոն ճարտարասան և զիւսնազուլս՝ որո տեսեալ՝ ուրախանայր և խոստանայր լնուլ զիղձն՝ փառս վարկանելով անձին. զի յոյժ հմուտ էր հելենական մասնին, և բազում աւուրս աշխատեալ՝ զերեւելանէր յապշութիւն պարեալ: Եւ սրբոյն յուսահատ եղեալ՝ զիմէ ի Սամուս, առ Հոսիանոս իմաստասէր և կրանաւոր, զոր ընկալեալ՝ զիւրաւ ասէր պատշաճել զգիրն ընդ վանկին: Եւ ջան եղեալ յօրով աւուրս, անվարձ ելանելով, զպարտութիւն խոստովանէր:՝ Եւ այս ի խնամոցն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնիւ առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց, զբովանդակ պարզեան ի ձեռն այլազանից շնորհել մեզ՝ որպէս զառաքելութիւնն, զքահանայութիւնն, և զարքայութիւնն. այլ պահէր զայսպիսի բարիս և մերով արեան զանկաւած[ով]ս ձիւրէր մեզ, յիմար ցուցանելով զիմաստութիւն յաւիտենիս:

Յայտ առնելով՝ թէ ոչ ըստ աղգաց է մակացութիւնն և իմաստն, այլ ի վերուստ իջեալ ի Հաւրէն լուսոյ: Եւ թէպէտ և ըստ տեսութեանն Աստուծոյ այսպէս տնաւրինէր, սակայն նա ի տխրութիւն և ի տաւախութեան անգանկէր, որպէս Մովսէս ի խորտակումն տախտակին, և դարձ առնէր առ Աստուած ի նա ընկենելով զելս իրին՝ որոյ հրնարաւոր էր անհնարն: Կրկին նորոգէր զպահսքն և զաղաթն, ընթանալով զառ ի վեր ընդ ափուռն Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի դըղեակն [[թգ. 14 բ] Պալուսեաց՝՝ և անդ զկա առնոյր ի փոքրագոյն այրի յաւուրս քառասնորկացն, և զեւթն եւթնական անսրւաղ անցուցանէր զփու և զգիշեր, երգելով զերգս երկից մանկանցն, և շա-

ա. 26 ա. հալքն:

1. Վարդ. Պատմ. «Մեսրոպ յորինէ գարութիւն հայերէն քան ևս երկու գիր առ Գանիէլի Ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց»:

Խոր. Գր. Գ. գլ. ԾԲ. Գանիէլեան գրերի մասին այս է ասում. «Կարգեալ ըստ ձեռք օրինակի յունական զվաղնջուց գտեալ նշանադիր տառից»:

1. Ամրողը պատմութիւնը առած է Խորենացուց Գր. Գ. գլ. ԶԳ.:

2. Վարդ. Պատմ. «Աջով իւրով գրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսէսի ի լեռոն Սինայ, ի լեռն Բալուայ որպէս տախտակն ցուցանի գրոշմն աստուածագիծ վիմին և նկարը գրերոյն»:

բարան եղանակ ապաշխարութեան՝ ըստ թրւոյ աւուրց պահոցն՝ զոր ընկալեալ երգէ և կեղեցի սուրբ:

Եւ ի կատարման եւթն երեկացն ի պահուի կաղով այրաձե տեսանէր զհրեշտակն որպէս Ամբակումն և հսկողն մանաւանդ թէ գերագոյն ևս՝ դանկրապէս և մովսիսաբար՝ զՏէրն հրեշտակաց՝ մարգարեական աչաք՝ որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ՝ չորեքտասան տառ: ² Եւ այնքան յամեալ առ նմա Տէր՝ որպէս առ Սողոմոնն ի քուն գիշերւոյն տաղով և սմա ընդարձակութիւն սրտի և ի մատուցութիւն անշափ: Եւ ուսուցեալ զգաղափար զրոյն որպէս և զայլ տառս որ և զաւրինակն նշանէր ի վերա քարի որ կա մինչեցայսաւր: ⁵ Ոչ միայն նմա բարդաւաճանք՝ այլ և համարէն սեռիս՝ գերագոյն քան զիւրայիլին՝ քանզի ի նոցա առաջին սալն խորտակեցաւ և երկրորդն վիմաւ ծածկեցաւ՝ իսկ մերս երկրքեանս պահեցան յաւետ: Վասն որո պարծիմք սովաւ՝ գերագոյն դոյ ազգաց քանզի ոչ այսպէս արար համայն ցեղից՝ որպէս հրաշագործեաց առ հայրապետն և առ թագաւորն մերս երեւելի առնել զդարձն և զկոչումն մերս:

Եւ արդ՝ առաւել փառաւորեաց ինքն իջեալ ուսուցանէր զնշանախնցնս՝ զի լիցուք ուսեալք յԱստուծոյ և նորա կոչեցցուք աշակերտք և ոչ մարդոյ: Այլ և յայանելով զսէրն իւր առ մեզ և թէ պիտոյ և պատուական եմք ն[ը]մա՝ վասն այնր յանձանձէ զմեզ, որպէս արար և առնէ: Որպէս հրամանէր Մովսէսի իջանել ի լեռնէնս իրրե և ի վարդապետէ և ի թագաւորէ լուսաւորեալ ողբով և շին մատանափոր տառիւս երթալ առ Ահարոն սուրբ քահանայապետն ուրախութեամբ և ցնծութեամբ:

1. Խոր. Գր. Գ. 44. ԾԳ. «ի սրտի գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի»:

2. Այս յիշատակութիւնը առանձին ուշադրութեան արժանի է՝ որովհետեւ պարզ նկատուած է, որ հեղինակը հետևելով Խորենացուն, ուրիշ աղբիւր էլ է աչքի առաջ ունեցել՝ որից օգտուում է նաև Վարդան պատմադիրը:

3. Տես Վարդ. Պատմ. վիպութիւնը:

Վասն որո յերթայն նորա լերինքն ցընծաինս այսինքն արքայն և եկեղեցինս և բըլուրքն խայտաինս՝ ազատքն և իշխանքնս և զեաքն ծափս հարկանէին՝ հաւատապեքն և հովիւքն: Եւ ի հասանելն նորա ի զաւառս իւրս ելանէր Ահարոն՝ ընդ առաջ նորա հանգերձ բազում կրաւնաւորաք՝ եպիսկոպոսիւք և քանայիւք և համբուրէին զնա իրրե զնոյն ինքն զԹիսուս և կամ՝ զաշակերտս նորա: Եւ տեսանէին գերեւս նորա իրրե գերեւս հրեշտակի և հաւատաին տեսեան նորա և ընտունէին զմատանն Սողոմոնի զոր էր փոխեալ բանիւ և զրով: Եւ ընթերցեալ՝ բերկրէին խաղաինս խայտաինս խնդաին և ի ձայն մեծ հոհութիւն ի բարձունս վեր առաքէին առ ողին զանեղրական պարգեանս և պար առեալ՝ պատուէին զառաքեալն և զըվարդապետն և զերկրորդ լուսաւորին:

Եւ Ահարոն տարածեալ զձեռս և հայեցեալ յերկինս աւրհներ զառաքողն և զառաքեալն՝ զարւողն և զընդունողն և ընդ նմա համաձայնեալ հաւոք և հովիւք՝ ծերք և տըղայք և երիտասարդք և կուսանք՝ տային աւրհնութիւն լուսոյն աշխարհի որ լուսաւորեաց զմեզ ի ձեռն մեծին Մեսրոբայ [թղ. 15^ա]: Եւ ինքն Ահարոն բարձր ձայնիւ՝ շնորհակալութիւն վերառաքէր ասելով:

Աւրհնեալ ես Հայրս բնութեամբ և շընորհաւք զովեալ Որդիս բնութեամբ և պարգեաւք բարեբանեալ ես Հոգիդ Սուրբ Էութեամբ և ողորմութեամբ, եռակի զոյութիւն և եղակի բնութիւն. ինքնավառ ճառաղայթ եռ և մեւ և մեւ և եռ երեք սուրբ և մի Տէր, երեք լոյս և մի լոյս երեք Աստուած և մի Աստուած, ոչ ներհակք և ոչ նախ և զինի. և ոչ առաւել և նըւազ և ոչ իշխան և իշխեցեալ այլ հաւասար ամենայնիւ բարի և բարեւար, մեծ և հզաւր, իշխան և թագաւոր Տէր և Արարիչ Աստուած ամենայն յամենայն. ծանաղ և անձինս ծնեալ [և ծնեալ] և ծնող, բխեալ և բղխումն և բղխող, Գոհանամք զքէն, որ էնդ և եսդ և էդ, որ ոչ

1. Կոր. Ազգ. լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարունդ աւագանոյն ամբօխ ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյնս:

միայն կառուցեր զմեզ՝ այլ և կառավարես, կենդանացուցեր՝ և կերակրես սգալեալ և խմանալեալ, գոյացուցեր և ծոխացուցեր՝ և ստամբակելոյն և բռնաւորին՝ քաղցրութեամբ սաստեցեր՝ արձակելով ի կապոյն և ստորատեղեալ ի բանդի և ընդզեղեալ ստրկացն զրիժախնդիր լինելին՝ սակայն ոչ սպառնալ սիրոյն աւելով տապ և խոնաւ և արդիւնս զի բաւականացի պիտոյիւքն՝ որոց հաւասարեաց զանգիտեալ պատըւոյն և ոչ մոռացար զցաւ ծնաւդինս վասն որո յանձանձէիր երեւալ և խաւսեալ, տալ և առնուլ, պատըւել և պատժել, ընտրել և խոտել, մինչև ի լրումն ամանակին որ ելեր զհետ փախուցելոյն մոլորելոյն և կորուսելոյն։ Եւ բռնն հարեր ըզգարմէ նախնոյն իմոյ, զգամբար լուցեր՝ և աւել ածեր և գտեր զքոյ նկատեալ պատկերն և զմոլորեալ զըւարն, եղեալ ի վերա կենսաբեր ուսոյտ՝ ածելով ի փարախն և ի շտեմարանն։ Հետեւեցար ընդ շաւեղս մեր և կրեցի զմերն՝ բայց յաղտից և ի մեղաց։ Կրեցար յարգանդի՝ որ կրես զարարածս, յղացար ի չողոյն՝ ստեղծիչդ ամենայնի, ծնար ի կնոջէ՝ կազմողդ զկինն ի կողէ, և ի կուսէ՝ ի վեր քան զբանս Կերակրեցար կաթնասուն՝ կերակրիչդ կերողաց, հրոյ պարանաւ ձգեցեր զարքայսն յերկրպագութիւնս, ընծաեցար և ընծաեցեր, փախար և փախուցեր։ Աճեցար անաճդ, զաւրացար զաւրութիւնդ, շնորհ ընկալար շնորհքդ, վարդապետեցար վարդապետդ, հնազանդեցար անհրնազանդտ, լըւացար սուրբդ, վկայեցար ճըւմարիտդ, լըցար լիդ՝ և ընկալար անկարաւոր, պահեցեր պաքդ, փորձեցար անփորձդ, մտեր ի հարսանիսն անհարսնացելոյն ծընունդտ, բաժակացուցեր զինքնաբուխն, տըւիչդ որթոյ և որթդ ճշմարիտ։ Դարձար՝ մտեր՝ ընթերցեր՝ մեկնեցեր՝ ելար՝ երանեցեր, իջեր, սրբեցեր, հաներ, բացեր, յարուցեր, ընթերցար, վաստակեցար, ի վերա աւգո և ջրոյ գնացեր, ննջեցեր ննջեցուցեր, կերակրեցեր՝ արբուցեր՝ զամենայն ինչ արարեր զքոյդ և զմերս, յուցանելով յերկուց մի դոյ բնութիւնս։ Ածար ի գննումնս արձակեցար ըստ մեզ՝ կապեալդ անլոյծ և կապեցար մշտական, մանաւանդ ե-

թէ զմեզ կապեցեր զլուծեալքս ի մեղաց։ Կոչեցար հարսանիս առաքեցեր զծառայսն քո կոչել զհրաւիրեալսն, որք յետ կացեալք՝ ժողովելով ի ցանկէ և յանցէ և լցաւ առաքատդ կաթուղիէ հաւաքեալք ի [Թղ. 15^ր] բոլոր աղանց։ Դսկ այս աղդ կոչեալ երիցս և ոչ եկեալ, այլ գանալից արարեալ և սպանեալ զկոչողսն՝ հրաժարելով յանգս և ի հարկս և ի հարսանիս՝ մրնալով ի խաւարի յետ լուսոյն. քաղց և ծարաւ՝ յետ կենաց հացին և ջրոյն՝ ամս երեքհարիւր և երեք, զարձեալ ոչ արարեր անտես և ոչ պահեցեր ռիսս, այլ առաքեր նոր առաքեալ, ի նոյն տոհմէ զհաւն իմ և զհամայնից. և ետուր գնշանս քո ի ձեռս նորա, և առաքեցեր Աստուած փարաւոնի։ Որ եկն նշանաւք և արուեստիւք և հաւն յերկաթի հալոցէն, ի դիւսպաշտութենէն և ի մեղաց, և անցոյց յանապատն Սիոն և մկրտեաց յամպն և ի ծովն, ի ջուրն և ի հողին, և սուղեաց զանմարմին փարաւոն, և եկեղեցացուցեալ հաւաքելով ի մի, և կերակրէր երկնիջակ հացիւն և արբուցանէր վիմահոս ջրովն որ բխէ յորովայնէ՝ և խաղա ի կեանսն յաւիտենից։ Յարուցեր հովիւս վեց ի ծննդոց նորա, և առ իս դատարեցուցեր զսէր զարմի իմոյ. զորո զպատճառն քեզ միայն է զիտելի։

Դարձեալ գոհանամ բարեբանեմ զքեզ՝ որ յիմում ժամանակի առաքեցեր նոր աւետարեր և վարդապետ, որ զքո բանդ անխարդախ սերմանէ յերկիր կենդանի, և ոռոգէ զտնկեալս ի տան Տեառն և ի գաւիթս քո. զի քե ամենցին և ծաղկեցին որպէս զարմաւենի և բազմացին քան զմարսն մորույն Սելովմա՝ և զըւարձացին իրբե զխոտ ջրարբի. և զուռ տնկեալ ի գնացքս ջուրց՝ ասելով թէ Աստուծոյ եմ ես զիր հանելով և խրախուսելով։ Բանդի սովաւ վերստին լուսաւորեցեր զլուսաւորչին լուսաւորեալքս, պայծառացուցեր և բարձրացուցեր զրաւորական տառիւս որ ձեռամբ սորա ետուր մեզ, սակս որո պարգեւողիդ փառս վերառաքեցուք այժմ և յաւիտեան։

(Շարունակելի)։

Մեսրոպ Վարդապետ։

1. Ակնարկ Թաթէոս և Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեան վերայ, որ կրկնուեց 303 տարի յետոյ Լուսաւորչի օրով։